

ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՔԱՌՍԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հիմնաբառեր. *քառս, կառավարում, ռազմավարություն, համակարգ, էնֆրոպիա, դեֆերմինիզմ*

Հողվածում անդրադարձ է կատարվում կառավարվող քառսի կիրառման առանձնահատկություններին: Վերջինիս գործիքակազմի օգտագործումը փարբեր ոլորտներում (տնտեսական, քաղաքական, ռազմական) նպատակ է հեփապնդում ոչնչացնելու հասարակության մեջ ձևավորված համերաշխության մշակույթը: Ենթանպատակներից են ազգային և մշակութային արժեքների նկատմամբ հիշողության և ժառանգականության ոչնչացումը, բնակչության զանգվածների դիմադրողականության, ինքնակազմակերպվելու և զարգանալու կարողության նվազեցումը: Վերահսկվող և կառավարվող քառսային տեխնոլոգիաները զանգվածային ոչնչացման զենքի նոր տեսակ են: Կառավարվող քառսի առաջացման հիմնական պատճառը միջազգային իրավունքի գերիշխանության կորուստն է:

Պատմական ակնարկ

1990-ականների սկզբին բուռն կերպով սկսեց զարգանալ գիտական հետազոտությունների միջառարկայական մի նոր ուղղություն, որն ընդհանրական ձևով կարելի է անվանել գիտություն քառսի մասին: Վերջինիս հետազոտության առարկան անկայուն վարքով, քառսային ռեժիմների առկայությամբ և ոչ գծային շարժընթացով համակարգերն են:

Կառավարվող քառսի տեսությունը մշակել են ամերիկյան գիտական դպրոցի մի շարք ներկայացուցիչներ: Մասնավորապես՝ այս տեսության զարգացման գործում կարևոր դեր է ունեցել Ջ. Շարփը, որի «Բռնապետությունից դեպի ժողովրդավարություն. պայքարի 198 եղանակ»¹ աշխատությունում շարադրված են «վերահսկվող և



Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: 1998 թ. առ այսօր զբաղվում է գիտմաննկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հեփազոտական կենտրոնի ավագ հեփազոտող է: Հեղինակ է շուրջ 35 գիտական աշխատանքների:

¹ Шарп Д., От диктатуры к демократии. М., Новое издательство, 2005.

կառավարվող անկայունության» աշխարհաքաղաքական տեսության հիմնական դրույթները: 1984 թ.-ին ԱՄՆ-ում ստեղծվեց «Սանտա Ֆե» միջառարկայական հետազոտությունների ինստիտուտը՝ մասնագիտանալով քառուսի առաջացման, զարգացման և հասարակական-քաղաքական ոլորտում կիրառման մեջ²: Կառավարվող քառուսի գաղափարի մշակման գործում նշանակալի ներդրում է ունեցել ամերիկացի հետազոտող Սթիվեն Մանը: 1992 թ.-ն լույս է տեսել վերջինիս «Քառուսի տեսություն և ռազմավարական մտածողություն» աշխատությունը, որտեղ հեղինակն ուղղակիորեն խոսում է տարբեր տարածաշրջաններում «քառուստեղծելու» անհրաժեշտության մասին՝ որպես ԱՄՆ ազգային շահերի ապահովման գործիք³:

Նպատակը

Կառավարվող քառուսի կազմակերպումը հիմնված է զանգվածային գիտակցության և աշխարհայացքի վերակազմավորման վրա՝ անձի ամբողջ հոգևոր ոլորտի շահարկման միջոցով: Սա համաշխարհային տեղեկատվական և հոգեբանական պատերազմ է, որի նպատակներից են հասարակության մեջ համերաշխության մշակույթի ոչնչացումը, փողի պաշտամունքի և սոցիալ-դարվինիստական կարծրատիպերի լայն տարածումը⁴, իսկ ենթանպատակներից՝ բնակչության զանգվածների դիմադրողականության, ինքնակազմակերպվելու և զարգանալու կարողության նվազեցումը: Վերահսկվող և կառավարվող քառուսային տեխնոլոգիաները զանգվածային ոչնչացման զենքի նոր տեսակ են: Դրանք ներկայում չեն վերահսկվում միջազգային կազմակերպությունների կողմից և գործիք են համաշխարհային նախագծի պայքարում⁵:

Ըստ Ս. Մանի՝ միջազգային միջավայրը և միջազգային հարաբերությունները քառուսային համակարգերի տիպական օրի-

նակներ են, որտեղ կարևոր դեր է հատկացվում պատերազմներին՝ որպես քառուստարածման և դրա միջոցով նոր հավասարակշռության հաստատման կառուցակարգեր⁶: Համաձայն այսպիսի մոտեցման՝ որոշակի երկրների, ինչպես նաև տարածաշրջանների տեսանկյունից, երկարաժամկետ ռազմավարության մշակման հարցում պետք է շեշտադրվեն քառուստարածումը և դրա հնարավորինս վերահսկումը (կառավարումը): Այսինքն՝ ռազմավարության մեխանիկական, դետերմինիստական⁷ աշխարհայացքը՝ ըստ որի կարևորում են երկարաժամկետ հավասարակշռությունն և ժառանգականությունը, անհրաժեշտ է փոխարինել դինամիկ անհավասարակշռությամբ, որի հիմնական բաղադրիչը կառավարվող քառուստարածումն է: Սիներգետիկայի տեսանկյունից, ժառանգականություն ասելով հասկանում ենք, որ յուրաքանչյուր համակարգի ներկան և ապագան կախված են նրա անցյալից: Ընդհանրացնելով կարելի է նշել՝ վերահսկվող կամ կառավարվող քառուսի ներմուծումը տվյալ համակարգ հետապնդում է ժառանգականության և հիշողության վերացման գերակա նպատակ:

Կիրառման ուղղությունները

Կառավարվող քառուսի գործիքակազմի օգտագործումը հիմնականում իրականացվում է երեք ուղղությամբ՝ տնտեսական, քաղաքական և ռազմական (աղյուսակ 1):

Մեր տարածաշրջանում կառավարվող քառուսի գործիքակազմը, կարելի է ասել, օգտագործվել և ներմուծվել է բոլոր ուղղություններով: Տնտեսական ոլորտում դա տարածաշրջանի երկրներ է ներմուծվել ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո՝ «վայրի» շուկայական հարաբերությունների ներդրմամբ, ինչի հետևանքով շատ կարճ ժամանակահատվածում իրագործվեց միջանկյալ նպատակ, որն է՝ ազգային հարստության փոշիացումը: Վերջինս էլ, իր հեր-

² <https://web.archive.org/web/20160304071055/http://thegoodproject.org/wp-content/uploads/2012/09/GoodWork22.pdf>

³ <http://spkurdyumov.ru/what/mann/>

⁴ Лепский В.Е., Технологии управляемого хаоса – оружие разрушения субъектности развития / <http://spkurdyumov.ru/what/tehnologii-upravlyаемого-haosa/>

⁵ Նույն տեղում:

⁶ Mann Steven R. Chaos Theory in Strategic Thought // Parametes. Autumn 1992 // Parametes (US Army War College Quarterly)

⁷ Դետերմինացված համակարգում անցյալն աներկայորեն որոշում է ապագան: Այդպիսի համակարգերը անվանվում են անսահման հիշողություն ունեցողներ կամ բացարձակ ժառանգականություն:

Կառավարվող քառուսի կիրառման ուղղությունները և գործիքակազմը⁸

Ուղղությունը	Գործիքակազմը	Միջանկյալ նպատակը	Վերջնական նպատակը
Տնտեսական ոլորտ	Շուկային թերափայլի մեթոդներ	Տնտեսության «վայրի» ազատականացմամբ ազգային հարստության ոչնչացում	Տնտեսական կախվածություն միջազգային կենտրոններից
Քաղաքական ոլորտ	«Գունավոր» հեղափոխություններ	Բերել իշխանության արևմտամետ ազատական ուժերի	Ազգային և մշակութային արժեքների նկատմամբ հիշողության և ժառանգականության ոչնչացում
Ռազմական ոլորտ	Տարածաշրջանային պատերազմների հրահրում	Նպաստել տարածաշրջանի թիրախավորված երկրների (երկրի) պաշտպանունակության թուլացմանը	Վերահսկողություն սահմանել տարածաշրջանի հիմնական ռեսուրսային պաշարների նկատմամբ

թին, «խթանեց» վերջնական նպատակի իրականացումը:

Կառավարվող քառուսի տնտեսական ուղղության կառուցակարգը գործում է հետևյալ կերպ.

- Վերահսկվող քառուսի տեխնոլոգիաների կիրառմամբ, առաջին հերթին, փորձ է արվում փլուզելու ազգային տնտեսությունների ներուժը:
- Որպես մրցակիցներին ոչնչացնելու թաքնված ձև՝ հիմնականում վերաբերում է շահավետ տնտեսական ոլորտներին՝ հանձինս բարձր տեխնոլոգիաների: Այսօր արդեն բարձր տեխնոլոգիաներից ստացված եկամուտները գերազանցում են հումքից և էներգակիրներից ստացվող եկամուտները:
- Հաջորդ փուլում կիրառվում է, այսպես կոչված, «ֆինանսավարկային էնտրոպիայի»⁹ նոր հայեցակարգը՝ որպես դրամական էնտրոպիա, որի ամենակարևոր տարրը «վարկային ծագարն» է: Հենց վերջինիս օգնությամբ էլ առաջատար երկրները վերջնականապես կախման մեջ են դնում թույլ զարգացած երկրների տնտեսությունները՝ անընդհատ տրամադրելով արժևորվող արտարժույթով վարկեր:

«Հեղափոխություններ» իրագործելով տնտեսական ոլորտում՝ վերոնշյալ կենտրոնները հաջորդիվ ձեռնամուխ են լինում նաև քաղաքական (գունավոր) հեղափո-

խություններին՝ նպատակ հետապնդելով ոչնչացնելու ազգային արժեքների նկատմամբ հիշողությունն ու ժառանգականությունը:

Կառավարվող քառուսի քաղաքական ուղղության կառուցակարգը գործում է հետևյալ կերպ.

- Թիրախավորված երկրներում (խոսքը նաև Հայաստանի մասին է), առաջին հերթին, փորձ է արվում բացառելու ազգային արժեքներ դավանող իշխանությունների ձևավորումը:
- Որոշակի ժամանակահատվածով իշխանության ղեկը փոխանցվում է «կեղծ ազգայնականների»՝ ժողովրդին ապակողմնորոշելու նպատակով: Վերջիններս ընթացքում բավական «բարեհաջող» կերպով թալանում են, այսպես կոչված, «տնտեսական հեղափոխությունից» հետո մնացած ազգային հարլստությունը: Այսպիսով՝ նպատակ է հետապնդվում ժողովրդի շրջանում առաջացնելու և զարգացնելու դժգոհություններ իշխանությունների նկատմամբ՝ ընդհուպ «կոյր» ատելության աստիճանի, որն անհրաժեշտ է քաղաքական «հեղափոխություն» իրականացնելու համար:
- Վերոնշյալ դժգոհությունները, ի վերջո, հանգեցնում են «գունավոր» հեղափոխության իրականացման: Փաստորեն, տեղի է ունենում «կեղծ ազգայնա-

⁸ Աղյուսակը կազմել է հեղինակը:

⁹ Էնտրոպիան համակարգի այնպիսի որակն է կամ դրանում առկա ընդհանուր միտում, որ հետզհետե հանգեցնում է դրա կազմալուծմանը և, ի վերջո, կործանմանը: Սրա պատճառն այն է, որ համակարգի բնականոն գործողության հիմքում առկա էներգետիկ պաշարն աստիճանաբար սպառվում է:

կանների» իշխանության սահուն (որոշ դեպքերում հնարավոր է ոչ սահուն ճանապարհով՝ Ուկրաինա) հանձնում «կեղծ ժողովրդավար-ազատականներին», որի հետևանքն արժեքային համակարգի ոչնչացումն է և նոր՝ «ֆեյքային» հարացույցի ստեղծումը:

Որպես կանոն, տնտեսական և քաղաքական ոլորտներում կառավարվող քառուսի կառուցակարգերն անմիջականորեն կիրառում են հենց շահագրգիռ կենտրոնները: Ինչ վերաբերում է ռազմական ոլորտին, այստեղ համապատասխան գործիքակազմի օգտագործումը կարող է վերապահվել միջնորդավորված՝ պրոքսի երկրներին կամ ուժերին, ինչը, կարելի է ասել, վերջին ամիսներին իրականացվեց մեր տարածաշրջանում:

Նման սցենարներում առկա է մի ակնհայտ աշխարհաքաղաքական տրամաբանություն. կառավարվող քառու ներմուծող երկրները, միջնորդավորված՝ պրոքսի ուժերի միջոցով փորձում են լրացնել տվյալ տարածաշրջանում առաջացած աշխարհաքաղաքական վակուումը՝ շահագրգռված լինելով փոխել կամ նույնիսկ «կոտրել» ստատուս քվոն, որը տարբեր իրադարձություններից և գործընթացներից հետո ստեղծվել է համապատասխան շրջաններում:

Մեր տարածաշրջանում համապատասխան կենտրոնները նման մարտավարություն են կիրառում՝ օգտագործելով պրոքսի երկիր դարձած Թուրքիայի «ներուժը»: Ասվածի ամենավառ օրինակներն են 2020 թ.-ի սեպտեմբեր-նոյեմբերյան արցախյան ճգնաժամը, երբ Անկարան ստանձնեց ռազմական գործողությունների և քաղաքական գործընթացների անմիջական վերահսկողությունը, իսկ մինչ այդ՝ իրավիճակը Արևելյան Միջերկրական ծովում, որտեղ թուրքական ռազմական-ծովային ուժերի միջոցով քառու և ճգնաժամ ներմուծվեց գազի հանքավայրերի շուրջ:

Երկու դեպքում էլ նպատակը նույնն է՝ բռնակցումը. առաջին դեպքում Արցախի տարածքների բռնակցումն է իր պրոքսի երկիր Ադրբեյջանին, իսկ երկրորդ դեպքում կարող է լինել Հյուսիսային Կիպրոսի բռնակցման հարցը:

Կառավարվող քառուի ռազմական ուղղության կառուցակարգը գործում է հետևյալ կերպ.

- Համապատասխան կենտրոնները, առաջին հերթին, օգտագործում են ոչ թե միջազգային հարաբերությունները կարգավորող ինստիտուտների ներուժը (ՄԱԿ, Եվրամիություն, ԵԱՀԿ և այլն), այլ իրենց ենթակայության տակ գտնվող «ինստիտուտների» (տվյալ դեպքում՝ թյուրքալեզու ժողովուրդների) ներուժը:
- Օգտագործվում են միջնորդավորված՝ պրոքսի ռազմական ուժեր (տվյալ դեպքում՝ ահաբեկիչներ), քանի որ դրանք ավելի «էժան» են և «չունեն» հայրենիք:
- Հարձակողական տեղեկատվական պատերազմի վարումը, որն անմիջականորեն իրականացվում է դեկավար շրջանակների կողմից (հիշենք Էրդողանի վարքագիծը), հասցեագրված է ոչ թե վերնախավին, այլ հասարակ ժողովրդին:
- Եվ ամենակարևորը՝ այս ամենը տեղի է ունենում «ձևախեղված» Եվրոպայի պայմաններում:

Եզրակացություն

Կառավարվող քառուի ներմուծումը յուրաքանչյուր տարածաշրջան հնարավոր է դառնում «վակուումային տարածքների» առաջացման հետևանքով, երբ անհրաժեշտություն է առաջանում դրանք բովանդակային առումով փոխհատուցելու: Իսկ այդպիսի վակուումի առաջացման պատճառը միջազգային իրավունքի գերիշխանության կորուստն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Пригожин И., Стенгерс И. Порядок из хаоса: Новый диалог человека с природой / Пер.с англ.: Под общ.ред. В.И. Аршинова, Ю.Л. Клионтовича.-М.: Прогресс, 1986.
2. Шарп Д. От диктатуры к демократии. М., Новое издательство, 2005
3. Mann Steven R. Chaos Theory in Strategic Thought / Parametes. Autumn 1992/
4. Mann Steven R. The Reaction to Chaos // Complexity, Global Politics, and National Security. Edited by David S. Alberts and Thomas J. Czerwinski. National Defense University Washington, D.C. 1998
5. Waldrop M. Complexity: The Emerging Science at the Edge of Order and Chaos. N. Y.: Simon & Schuster, 1992.
6. Рамоне И. Геополитика хаоса / Пер. с франц. И. А. Егорова. М., ТЕИС, 2001
7. Лепский В.Е. Технологии управляемого хаоса – оружие разрушения субъектности развития, <http://spkurdyumov.ru/what/tehnologii-upravlyemogo-haosa>
8. Нурышев Г.Н. «Доктрины «управляемого хаоса» в современной глобальной геополитике» <http://economics.open-mechanics.com/articles/401.pdf>
9. <https://web.archive.org/web/20160304071055/http://thegoodproject.org/wp-content/uploads/2012/09/GoodWork22.pdf>

Vahe БУЛАНИКЯН

Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

РЕГИОН И АРМЕНИЯ

ВНЕДРЕНИЕ УПРАВЛЯЕМОГО ХАОСА В РЕГИОН

В статье рассматриваются особенности применения управляемого хаоса. Использование инструментария управляемого хаоса в различных сферах (экономической, политической, военной)- направлено на уничтожение памяти и наследственности национально-культурных ценностей, снижение способности к самоорганизации, сопротивление и развитие населения. Управляемые и контролируемые хаотические технологии - это новый вид оружия массового поражения. Основная причина управляемого хаоса - это утрата господства международного права.

Ключевые слова: хаос, управление, стратегия, система, энтропия, детерминизм

Vahe BULANIKYAN

Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics

REGION AND ARMENIA

INTRODUCTION OF MANAGED CHAOS INTO THE REGION

The paper discusses the peculiarities of the application of controlled chaos. The use of the toolkit of managed chaos in various spheres - economic, political, military - aims to destroy the memory and heredity of national-cultural values, reduce the resistance of the population, the ability to self-organize and to develop. Controlled and managed chaotic technologies are a new type of weapon of mass destruction. The main reason for the managed chaos is the loss of the dominance of the international law.

Key words: chaos, governance, strategy, system, entropy, determinism